

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ձր.

Վեց ամսայ 6 Ձր.

ԱՐՏԱՍԱՀԱՆԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 Ձր

Վեցամսայ . . . 7 Ձր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյար

Վեցամսայ 1.50 "

ԿԱՆԵՍԻԿ

Մանուցման արդ
20 ամսօրով

ՀԱՍՏԻ

Selection du journal

«Le Vostok»

VARNA (Bulgaria)


Редакция

на ВѢСТНИКЪ

«Востокъ»

ВАРНА

Գրութեանը եւ լեզ
տրոսիր



ԼՐԱԳՐԻ

ԱՅԿԱՅԻՆ ԵՐԻՔԱՅԻՆ ԵՐԻՔԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՆ ՇՈՐԱՍԻ

ԹԵ ԻՆՉՈՒ ԶՈՒՆԵՑԱՆԵՐ

Բ.

Հինգ վեց դար անցնող հաստ
գերութեան լուծին տակ ճնշու-
ած և խոր ազդեցութեան մէջ
խորխորանք տաճկահայաստանցի-
նոր նոր հաստատուելու վրայ ե-
ղով վարժարաններու և հայրե-
նասէր ուսուցիչներու ու գոր-
ծիչներու շնորհիւ հազիւ ինը-
նագիտակցութեան գալ պիտի
սկսէր, երբ 1877 ի ռուսո-թուրք
պատերազմը բացուեցաւ և ռու-
սական բանակը հայ գործադետ-
ներու ու սպաներու առաջնոր-
դութեամբ հայաստան մտնելով,
թուրքահայ հաստակութեան վրայ
գիւթի մտաւորութիւն մը գոր-
ծեց: Ռուսահայ թէն մեծ բաներ
սպանելու և յուսալու միամիտ
նախապաշարութիւնը այդ օրէն ըս-
կաւ: Գրիգոր Արքեպիսկոպիտ, Ռ.
Պատգամեանի և Բաթիկի գրիչ-
ները հետզհետէ եկան այդ նա-
խապաշարութիւնը ընդհանրացնել
մտքէ աւելի բռնաւ եռանդէ
առաջնորդուող տաճկահայ երի-
տասարդութեան մէջ: Բայց լուրջ
և մտաւոր գաղափարներ: առանց
գրեթէ մեծ բանի մը ակնկալու-
թեան շարունակեց իր գործը հայ
համայնքները զարգացնելու և
ինքնապաշտպանութեան զգացու-
մը զօրացնելու նախագծին վը-
րայ: Հայ գիւղերու մէջ վար-
ժարաններ հաստատուելու գործին
հետ հետզհետէ կէս-կրթասիրա-
կան և կէս-հայրենասիրական ըն-
կերութիւններ և կազմակերպու-
թիւններ ծայր տալ սկսած էին
Պոլսէն մինչեւ ամենամանջան գա-
ւառները: Արմենիայն Մարտիկոյ
մէջ և Իրաւունքը չորս Պուլկա-
րիոյ Վառնա քաղաքէն սկսած
էին 1885 ին Հայաստանի բարե-
կարգութեան պահանջը հրապա-
րակ գնել ի դիմաց տաճկահայ
ժողովուրդին, բայց միշտ կաթը
նետով միջազգային դաշնագրի մը
որոշ յօդուածին, և առանց թուրք
կայսրութիւնը կործանելու և ա-
նոր տեղ հայկական թագաւորու-

թիւն մը կամ ռամկավարական
պետութիւն մը հաստատուելու
պաշտախօսութեանց, ինչ որ
կրնար ներքնապէս սկսուած
ինքնապաշտպանութեան ու զար-
գացման հակառակ գործը խոչըն-
դաներու մատնելու և այդ ոճի-
րը պիտի ըլլար Մեծ Նպատա-
կին դէմ գործուած: Այդ ոճի-
րը սակայն անգիտակցաբար գոր-
ծեցին կարգ մը ռուսահայ գոր-
ծիչներ, որոնք տաճկահայաստա-
նի հայ և իսլամ բնակչութեան
հոգեբանութիւնը և տեղական
հանգամանքները առանց ու-
սումնասիրած ըլլալու եկան յո-
խուռն կերպով զեկտալարել տա-
կաւին իր խանձարութիւն մէջ
զարգանալու պէտք ունեցող հայ
յեղափոխութիւնը, և սկսան այդ
վիճակին մէջ գտնուող երա-
խան հակա հակա մը ցոյց տալ և
հրապարակային պաշտախօսու-
թիւններով, անիմաստ ցոյցե-
րով թուրք կառավարութիւնը և
իսլամ ամբար զրգուել:

Տաճկահայ մտաւորականու-
թեան լուրջ գաղափարները բո-
լոնեց այդ ռուսահայ ինքնակոչ
զեկտալարներու գործունէութե-
նէն ծագելիք վտանգը, վտան-
գը կոտորածներու և վտանգը
սկսուած լուրջ գործը վիճեցը-
նելու: Բայց դժուար էր այդ
վտանգը իր բոլոր արհաւիրք-
ներով ըմբռնել տալ տաճկա-
հայ ամբար ինքնապաշտպան-
ութեան և ինքնապաշտպանութեան
հարկ եղած աստիճանին հասած
չըլլալով, խանձարութիւն իր ձեռ-
քերը նոր ազատած երախայի
մը պէս փայլուն եւ ոսկեղոծ իրե-
րէն ու խօսքերէն խաբուելու ըն-
դունակ թողուց ընկի իր երկրա-
ցի գործիչներու սկսած լուրջ
գործը և հետեւեցաւ ռուսահայ
գործիչին ցոյց տուած փայլուն
ու պայծառ բաւիղին, միշտ իր
երաւակալութեան մէջ ունե-
նալով Ռուսիոյ յաղթական բա-
նակը առաջնորդող հայ գորա-
վարները, սպանները ու զինուոր-
ները, որոնք հայրենակից էին
այդ Ռուսահայ յեղափոխական-
ներուն և որոնք պիտի գային

թուրքին դէմ կռուելու թուրք-
հայաստանի մէջ հայոց ազատու-
թիւն ձեռք բերելու համար:
Տաճկահայ ամբար ինքնապա-
շտպան երեւակալութիւնը և խա-
բուելու տրամադրութիւնը շա-
հագործել լաւ գիտցան ռու-
սահայ գործիչները, կատարելու
համար տաճկահայ լուրջ գոր-
ծիչներու ազդեցութիւնը քանի
որ ասոնք կը հակառակէին ի-
րենց յախուռն ընթացքին, և
Վարդապետը իր գաւառին մէջ
պատիւ չունենար կամ «հեռու
տուրք գորաւոր կըլլայ ժողո-
վրդական առաջնորդ ալ պէտք
չէ մտնել»:

Ռուսահայ գործիչները տաճ-
կահայ ամբար ինքնապաշտպան
հետեւալութիւնը ու համակեր-
պութիւնը իրենց կատարելապէս
ապահովելու համար չը խղճա-
հարեցան նոյն իսկ սպաններ տալ
կարգ մը տաճկահայ լուրջ և
հաստատու գործիչներ, ինչպէս
կարեկցեանք, որ Բարձր Հայքի
մէջ կարեւոր ուժեր իր շուր-
ջը հաւաքած ըլլալով, Ռուսահայ
գործիչներու բռնած ընթաց-
քին վտանգաւոր ու կորստաբեր
լինելու բորակաւոր ընկել չէր
թաշուեր: անոնք մահուան գա-
տապարտեցին Ոսկիան Նազարը,
Վանեցի մը, որ Դաշնակցութեան
Պարսկաստանի ներկայացուցիչն
էր և որ Խանասորի յիմար ար-
շաւանքը ընելու համար Դրո-
շակիան հրամանը գործադրել
չէր ուզեր, ամբողջ գաւառին
հայ բնակչութեան վտանգը նա-
խատեսելով: Դեռ անոնք կըռ-
թնած տաճկահայ ամբար ինքնա-
պաշտպանութեան ուժին,
իրենց գլխաւոր զէնք ընտրե-
ցին զրպարտելու և սեւացնելու
գարշելի գրութիւնը, որով տաճ-
կահայ լուրջ և հաստատու բո-
լոր կարեւոր գործիչներ հայհո-
յալից զրպարտութիւններով նը-
շուակուեցան, ինչպէս Ռ. Բոր-
թուպալեան, Ա. Արփիարեան,
Գ. Զիթեան և այլն: և այս ա-
նոր համար որպէսզի անկեղծ
լուրջ տաճկահայ գործիչներու
խրատը ու խօսքը իր արժէքը
կորսնցնէր ամբար ինքնապա-
շտպանութեան առջեւ և

սա միշտ կուրորէն հետեւող մը-
նար իրենց, Ռուսահայ գործիչնե-
րուն: Եւ ասոնք ապագայով յաջո-
ղեցան տեղաւոր ամբար ինքնա-
պաշտպանութեան ու խաբուելու
երկտաւարներու խումբ մը
իրենց հետեւէն քաշելու, և կը
քաշեն դեռ մինչեւ ցայսօր,
արդեւ ըլլալով ներքին լուրջ
և լեւեղ կազմակերպութեան մը:
Ահա այսպէս կարգ մը ռու-
սահայ յեղափոխութիւնը՝ որոնց
բոլորը կամ ընկերակցական կամ
անիշխանական, հող գտան տաճ-
կահայոց մէջ, և իրենց էնթրիք-
ներով, ոճիւրներով եւ զրպար-
տութիւններով, ամբար ինքնա-
պաշտպան շնորհիւ, յաջողեցան
տաճկահայ գործիչներու ազդե-
ցութիւնը մեծաւ մասամբ չէզո-
քացնել, ասոնց սկսած լուրջ
գործը վիճեցնել, հայրենիքը
ապարդիւն արեւհեղութեանց
մատնելու և այսօր ալ իրենք իրենց
մէջ երկպառակած և անուժ,
սկսած են իրար հակառակ նոր
զանգակներ հնչեցնել հայ հա-
սարակութեան ականջին, միե-
նոյն կուսակցութեան օրկաններ
զիրար հակառակ, հայրենիքի դա-
տը ձգելով, ընկերակցութիւն
և հակազգայնութիւն քարոզել
և այս ամենը երկիրը ամայի և
աւերակ դարձնելու պատճառ ըլ-
լաւ յետոյ:

Իրոյց այս ողբալի կացութեան
մէջ, սակայն յայտնուեցաւ թէ յու-
սախար եղած ռամիկ ամբար
պիտի սթափի և ճանչնայ ռու-
սահայ գործիչներու զեկտալա-
րութեան անբաւարար սխալը և
հետեւանքն եղող աղետները, ո-
րոնք մեծաւ մասամբ չպիտի
պատահէին և ցարգ նպատաւոր
արդիւնքներ ձեռք բերուած պի-
տի ըլլային, եթէ ռուսահայու-
թիւնը գրեթէ քանի մը տարի
եւս միայն նիւթական միջոցնե-
րով նպատակէր մեր ազգային
չարժանիքը, զոր տաճկահայ գոր-
ծիչներ սկսած էին լրջօրէն ու
չըլահայեաց կերպով եւ հետզ-
հետէ յառաջ կը տանէին:



ԿՈՎԿԱՍԻ ԶԱՐԴԵՐԸ

ՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Բրո Արմենիայէ կը թարգմանենք հետեւեալ հեռագիրները որ հաղորդուած են Իրօշակի խմբագրութենէն :

Ժընէվ 26 յունիս

Ի Կովկաս Հայերու եւ թաթարներու միջեւ կոխը չէ նուազած երեւանի գաւառի գիւղերուն մէջ : Հայերը զայրացած յարձակեցան այն թաթարներու գիւղերուն վրայ, որոնք իրենց անգլխովեմբն նշանաւոր էին : Եւստ մը թաթարներ կը փախչին : Հայ յեղափոխական յանձնախումբերը յայտարարութիւն մը հանեցին բուռն պատերազմ հրատարակելով կոտորիչ թաթարներուն գէտ որոնք, համեմատելի թիւան եւ եղբայրութեան կոչին : Բռնաբարութեամբ, աւերուով, սպաննութեամբ եւ թալաւորով պատահանած էին :

Երեւանի թաթարները սարսափած իրենց կոտորածներէն, գոցուած կը մնան տուններուն մէջ եւ հաշտութիւն կը խնդրեն : Հայերը հաստատ երաշխաւորութիւն կը պահանջեն : Զօրավար Ալիխանով եւ փոխկառավար թաւանօվսքի՝ որ իշխան կալիքին նախկին օգնականն էր, կարգապահութիւնը վերահաստատելու համար նախնական զրկուած ըլլալով, ջարդողները քաջալերեցին իրենց ընթացքով : Այս նոր ապստամբ մըն է Կովկասի փոխարքային կողմնապահութեան : Ամէն կողմէ Հայերը կը գնդուին վստահութիւն չունենալով կառավարութեան եւ ոչ ալ թաթարներու խոստումներուն վրայ :


Ժընէվ 30 յունիս

Արեւմտեան ընդհարումներ, տեղի ունեցան Հայերուն եւ թաթարներուն միջեւ Պաշտօնաշէնի եւ Վաղարշապատի գաւառներուն մէջ : 7000 ի չափ թաթարներ կողմէն յարձակելով Վաղարշապատ, Աշտարակի եւ նոյն իսկ Եջմիածնայ վրայ : Հայ յեղափոխական խումբերը զանոնք ետ մղեցին անոնց մեծ կոտորած պատճառելով : Աւարառութեանց եւ կոտորածներու մասնակցող տասնեւմէկ թաթար գիւղեր կործանեցան վրէժառութեան միջոցին :

Իր սաստիկ հայատեցեութեամբ ծանօթ զօրավար Ալիխանովէ յետոյ, իշխան Լուր-Նարայէնը զրկուեցաւ Երեւան կարգապահութիւնը վերահաստատելու համար : Հայ ժողովուրդը վստահ է անոր անկողնակալութեան մասին : Փոխարքայ Տաշքովի խոստումներուն հակառակ, ոստիկանութիւնը կը շարունակէ խուզարկութիւններ ընել եւ հայերուն գէնքերը ժողովել :

Հայ յեղ. գաղնակցութիւնը յայտարարութիւն մը հրատարակեց մահուան սպառնալիք ընելով այն ամեն օստիկաններուն որոնք կը ձգտին հայերը զինաթափ ընել : Եղիսաբէթուպօլի կառավարիչը, զօրավար Լուցաօն հրաժարեցաւ, չուզելով պաշտպանել ներքին կոխը բարձր վարչութեան կողմէ ստեղծուած :

Եւստ ապացոյցներ կան թէ համայնական միաբնակներ յարաբերութեան մէջ են Բեդերսպուրի քաղաքական ոստիկանութեան հետ :



ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՇԽԱՐՀԻ

Ա Ռ Զ Ե Ի

(Եւրոպական ռախորդ թիւէն)

Գալով իրաց սովորական ընթացքին, նոյնպէս կ'ըսեմ թէ Հայ անհատը պարտաւոր է ինքնապաշտպան ըլլալ երբ թշնամին իր պատուին կամ կեանքին կը սպառնայ : Իր վեհանձն գիւմարութեանը մէջ կրորդնայ անիկա ինչալ. եւ գուցէ ուրիշներ ալ այդ առթիւ շնաստիք կամ սպաննութիւն, սակայն անիկա իր պարտքը կատարած կ'ըլլայ : Զմտունք թէ այս կարգի գիւմարութիւններն անհատական հանգամանք ունենալով՝ սովորաբար պատճառ չեն ըլլար կառավարական խոստութիւններուն ամբողջ հասարակութեան վրայ տարածման : Տարապաշտան ու լայնագիր խոստութիւններն ի գործ կը դրոյն այն պարագային երբ անհատական գիւմարութիւնը յեղափոխական ընկերութեան մը գոյութիւնը ենթադրել կուտայ այն հասարակութեան մէջ : Ի մի բան՝ յեղափոխական խմբարկութեան հարցին հետ պատճառ թրքին կատարել ինքնապաշտպանութիւնը, աղմուկը, անգոյ ուժերու եւ կազմակերպութիւններու վրայ զրախօսութիւններն են գիւմարադրելը աղէտներուն եւ ջարդերուն : Իրերը չէին կրնար այս ծայրայեղութեանց հասնել Հայերու անհատական եւ «ոսմանթիք» ինքնապաշտպանութեան արարքներու պատճառ :

Հակասութիւն չկայ ուրեմն մեր հաստատումներուն միջեւ, զի Դաշնակցականաց խաղը անհուն հեռի է «ոսմանթիք» կամ ինքնապաշտպանութեան ժողովրդական կամ անհատական շարժումներ ներկայացնել : Պարոնները իմեն զրամական հանգանակութիւններով զրամ կ'առնեն կովկասի Հայերէն, եւ Սասունի ու Մոջ Հայերուն իմեն գնել կուտան իրենց ներմուծած գէնքերը՝ մինչեւ անգամ այդ խնդրներուն տարակալ գոյքերն ու առջաններն երբեմն գոհել տալով այս ակամայ գնումներու համար, եւ հեռուէն կը գիտեն թէ ինչքան անօգուտ, ինչքան վնասակար կըլլան անոնք մեր հայրենակիցներուն որոնք ոչ միայն գէնքէն ալ եւ իրենց կեանքէն կը զրկուին բարբարոս բանակի մը խժոժական հարուածներուն տակ :

Պարոնները ուրիշ փաստակութեան մ'ալ իբրեւ վերջին ապաստանարան կրնան դիմել՝ խոստափելու համար արդարութեան դատաւճռէն. անոնք կրնան ճամարտակել թէ կացութիւնը այնքան զմեղակ է որ այլ եւս կարելի չէ հանդարտ մնալ, հարկ է խլիւղութեամբ ըլլալ ճղճիմ ուժերով, որպէսզի Եւրոպա հասկնայ թէ Հայաստանի վիճակը անհանդուրժելի է եւ անմիջապէս դարմանի կարօտ :

Այս ալ խաբէութիւն է : Այո՛, կացութիւնը անաւորէ. բայց գիտե՞ք նաեւ թէ Հայերը որք առաջ եւրոպայի վրայ յոյս գնելով գիւմարութեան քիչ մը տրամադիր կերեւէին, ներքնապէս հասուն չէին լուրջ շարժումի մը համար, եւ իրենց վերջին ջանքերուն մէջ ի վեր իրենց անգոր եւ անոր կացութեանը գիտակցել կը հանդուր

ժեն : Հայերն ալ ուրիշ մարդկային էակներու պէս են. չափազանց ջանջախուած վիճակի մէջ գտնուողները երբեք չեն ապստամբիր : Ճշմարտութեամբ պահուն է որ հարստահարեալ ժողովուրդները ընդվզման կը միտին : Թօքովի ապացուցած է թէ Ֆոանսա եղաւ առաջինը յեղափոխութեւ, ոչ վաւերի ամենէն աւելի, այլ զի բաղդատորէն ամենէն նուազ հարստահարեալն էր Եւրոպական ժողովրդաց մէջ : Մեր յեղափոխական Պարոնները իրենց բաղձնած որք այնքան աւելի հեռուոր կամ անհասանելի ապագայի մը կը դատապարտեն որքան իրենց խօլ խորտումներով առիթ կընծայեն ճշմարտութեւ սաստկացումին : Այս պայմանները տուեալ ըլլալով՝ յոռոգոյն քան անօգուտ է հնարիլ զրաքն եկած խմբի մը խորտումներն զգուշացնել ինքնապաշտպանութեան համարային յարցի մը կեղծ կերպարանքով եւ այնպէս ներկայացնել զայն Եւրոպայի :

Զմտունք հաստատել թէ այդ կեղծ ընթացքը յոռոգոյն է քան սղոյալկան. պարզապէս ոճիր, ու իրիւ այնպէս կը նկատուի իրազէկ օտարներէն : Օտարները գիտեն թէ թուրքը իր տիրապետութիւնը Հայոց վրայ պահպանելու համար զանոնք վայրագորէն կը ճմլէ, եւ անոր խժոժական մեթոտները կը դատապարտեն. սակայն միւս կողմէն աւելի խժոժական կը համարին ընթացքը կեղծ յեղափոխական Հայերուն որք իրենց համազօր կրօնակիցներուն գէտ կը գրգռեն չհամազգեաց եւ այլակրօնի վարդապետութիւնը՝ այն անհիմն ու բաղդապաշտ տկրնկալութեամբ թէ այդ անգլխովեմբններէն թիւիւս Հայոց համար չա՛մ մը ելլէ հրաշիւք իմն :

Պիտան այս խօսքեր, Պարոններ, կրնա՞ք ձեռքերնիդ դնելով խղճերնուդ վրայ, եթէ ունի՞ր զեռխիղճ, ուրանալ այս վիճակներուն ճշմարտութիւնը :

Սակայն արդար ըլլալու համար ըսել պարտեմ, թէ դուք միայն չէք յանցաւոր, ամենքս ալ յանցաւոր ենք վաւերի ամենս ալ փայփայած ենք զանազան չափով այն ցնորքը թէ Եւրոպա պիտի ազատէ զհայաստան, թէ Արեւմուտքէն պիտի գայ մեղի մեր կոտորած ինքնօրինութեան թագը : Ասիկա մեր ազգային քաղաքական մեծ մօլորանքն է : Եւ այս մոլորանքը այնչափ չափով մարդկային ամեն անհատի եւ ամեն ժողովրդի հասարակ է : Մոլորանքը կը կայանայ հրաշազանին, յանկարծական փրկութեան, հզօրի մը միջնորդութեամբ մեծ բան ձեռք բերելու, պարգեւ ստանալու տիմար հաւատքին մէջ : Հրէայք կործանեցան այն յամառ ու տիմար ակնկալութեան երեսէն թէ «Մեօիան» պիտի գար ու զՍիւն ընէր տիեզերական մայրաքաղաք : Մինչեւ այսօր ալ, նոյն իսկ լուսաւորեալ ժողովուրդները իրենց կրօններու իրականանացումը այս կամ այն հզօր, հրաշալի իմն կարողութեանց տէր անձնաւորութիւնէն կը սպասեն յաճախ, միանալու փայլուն մը այդ խնդար վստահութիւնը յոյս տուն զօրաւար Պալմանթէի, որ աղգային «վրէժը» լուծելու կողուած վեհն էր, սակայն չուտով տեսնուեցաւ խայտառակ պատրանքին անգնութիւնը :

(Եւրոպական)

ՍՐԱԲԱԿԱՆ

ԱՊՍՏԱՄԱՐՈՒԹԻՒՆԸ

Սուէզ 19 յունիս

Պօլսէն բոլոր հաղորդուածներուն հակառակ Եւթի մէջ Թուրք զօրաց թիւը հազիւ 7000-ի կը հասնի : Այս զօրքերն ալ կազմուած են Սանայի ջախջախուած պահակներու մնացորդէն եւ մաս մըն ալ Անատոլիէն եկած :

Երբքի փաշան՝ որ Հօտէյտայի հրամանատարն է, երկու զօրաւոր ժին զրկեց Մանսի պաշարու մը զօրացնելու եւ քաղաքը մտնելու համար : Բայց այս արշաւանքն ալ ջախջախուեցաւ կատարելապէս ապստամբներու կողմէ, Հօտէյտայի նաւահանգիստէն քանի մը փրօթէթրօ գէպի Արեւելք :

Այս պարտութեան հետեւանքով, Երբքի փաշա առաջադիւց Արարնէրուն որ անոնց հետ բանակի : Եւ խոստացաւ շատ մը առանձնաշնորհումներ եւ ամէն տեսակ առաւելութիւններ :

Մահմուտ Եւսհան վճարար մերժեց, եւ պատասխանեց թէ ինք շատ անգամներ թուրքներուն հետ պայմանաւորուած էր եւ հաստատած էր թէ անոնց խոստումն հաւատարմութիւն չըլլէր :

Առաւել եւս հաւանական է թէ թուրքերը չպիտի կրնան նոյնիսկ Հօտէյտայի մէջ մնալ :

Ժուլմալ

Ճիստէ 27 յունիս

Ապստամբները գրաւեցին Մօզան, Պլա-Էլ-Մաքիւր, Ապու-Արիւր եւ Եւթի ներքնաշխարհը :

Ամբողջ Եւթիէն թուրքերուն ձեռքը մնացած է միայն Հօտէյտան : Կը հաստատուի թէ Մանսան յանձնուած է :

Էֆօ Տը Բարի

Սուէզ 29 յունիս

Թրքական չորս փոխարքանաւեր, որոնց մէջ չորսը 2000 զինուոր կայ, հոս կը սպասեն ամիսէ մը ի վեր որ իրենց դրամ զրկեն ամուսն գնելու համար :

Նաւերուն մէջ գտնուող զինուորները բաւականաչափ ուսուստ չունենալով, փորձեցին քաղաքին խանութները կողոպտել : Քանի մը անկարգութիւններ տեղի ունեցան : Անգլո-եղիպտական կառավարութիւնը անգործութիւնը վերահաստատեց : Զինուորներէն շատերը փախան :

Հօտէյտա 29 յունիս

Աղբիւր նահանգին մէջ Արարները ապստամբած են : Թուրքերու հաղորդակցութիւնները Քիւնֆիտա նաւահանգիստին հետ խափանուած են, եւ Ապհա մայրաքաղաքը պաշարուած է ժամակակէ մը ի վեր : Հոնկէ կը հեռագրեն Հօտէյտա եւ Պլիւս որ օգնութիւն զրկուի :

Հալապ

Սօֆիայէ յունիս 29 թիւով հետեւեալը կը հաղորդեն եւրոպական թերթերու բայց ասոր ստուգութիւնը կասկածեալ է :

«Սանաան առնուած է Թուրք զօրքերէն : Հաղորդակցութիւնները վերը ըսկած են : Մարաշտիս Գէյրի փոշան կը բանակցի ապստամբապետներուն հետ, Մահմուտ-Պիթի-Մահա : Մէքէի վրայ արշաւանքը կեցաւ, Պա-

լատին մէջ կը յուսան ապստամբու-
րուն հետ համաձայնութեան մը գալ ւ
Հակառակ այս վերջին հեռագրաւու-
րին, «Յիւլիոս» կը հաստատէ թէ ա-
պստամբք միշտ կը յառաջանան.
Թուրք զօրքերը ու եւ յաջողու-
թիւն չեն ունեցած: Իսկաթի մէջ
5000 զօրք պաշարուած են:

ՓՈԽԱՐՔԱՅ ԲԸՂԸՆ ԵՒ ՍՈՒԼՔԱՆԸ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Փախչողական խաբիֆան, այս օ-
րունու կոչուած է որովհետեւ Սու-
համէտի զուարթ, Փախչողական սե-
րունդէն է, ու եւ հեղինակութիւն
չունէր այս արտադրող մէկու մը կա-
կելու, եւ արտաւել նուազ մէկու
մը որ թէ ցեղով, թէ ազնուական-
նութեամբ, թէ օրինաւոր եւ եւ
աստուածաբանօրէն անյարմար էր
այդ պաշտօնին: Ու եւ Սուլթան
համարձակած չէ այս արտադրողի
բացման վրայ ծանրանալ: Ինչպէս
Ապախի Համիտ որ այդ արտադրողի
մասին ունեցած պահանջները զօրա-
ցնելու նպատակաւ յանգնութիւնը
ունեցաւ հանել ալ, Թուրքիոյ մէջ
սպառած Ղուրանի օրինակներէն այն
Հատիկէն Շէրիֆները, որոնք կը պա-
րունակեն ներքինացի պատուէրներ
կախիֆայի նկատմամբ: արքայազնու-
թիւն մը որ սարսափ պատճառեց
մինչեւ իսկ Պոլիս գտնուած կրօ-
նական հեղինակութեանց, եւ ուրիշ
խիւսիսներ ազդեցութեամբ են, սուրբ
գրքին հանդէպ եղած այս անպատ-
ուութեան զէմ բողոքներէն համար:
Փախչողական մը առաջ Սուլթանը
իր շարախօրհուրդ մէկ վարկեանին,
ամբողջ մահմետական աշխարհը տե-
սակ մը համալսական միութեամբ
միացնելու գաղափարը ունեցաւ,
եւ անոր պետը պիտի ըլլար ինքը
իր այդ գաղափարի կազմակերպի-
չը: Իր խաբիֆայութեան յանապա-
թիւնները շատ շատ լըջօրէն առ-
նելով, քաջալեւուած չողքորթնե-
րէ որոնց նպատակն է անոր չը-
նորհը չանելով իրենց շահերը առաջ
քշել, նա այնպէս կենթադրէր թէ,
եթէ նա ամբողջ մահմետական աշ-
խարհէն իրեն անոր պետը ծանչ-
ցուի, այն ատեն Եւրոպայի մեծ
պետութիւնները եւ Միացեալ Նա-
հանգները աւելի յարգանքով պիտի
վարուէին իր հետ, քան թէ պար-
զապէս իր Թուրքիոյ Սուլթանը:
Բանի մը տարիներ նա ինքզին-
քը առաւ այս համալսական
շարժումը տարածելու: Դադանի
պատուիրակներ խրկեց աշխարհի ա-
մեն կողմերը, մինչեւ Չինաստան
եւ Ֆրիկայան կողմները, ծափաւ եւ
Միջին Ասիոյ, Մարօք եւ Պարսկաս-
տան: Այս ծառայող աշխարհի գա-
նապան մասերու մահմետական ա-
զաջողութեան իրար հետ յարաբերու-
թեան մէջ գնելու: Բայց արդեւն-
քը վնասակար եղաւ Սուլթանին:
Շարժումը իր իշխանութենէն դուրս
չլաւ: Անոր նկատի առնել կոչուած
հարցերուն մէջ էին իր վարքը եւ
քաղաքականութիւնը իրեն: Դիւս-
լիման իշխան մը, եւ իր խաբի-
ֆայութեան պահանջները, եւ հիմա
ի մեծ տխրութիւն իւր, եւ հա-
կառակ իր քաղաքացի եւ իր յա-
նգրուն, այն մարդիկը որ այս հա-
մալսական շարժման պարագային
կը կազմեն կոչ մը ըրած են հա-

մաժողով գումարելու եւ այն ալ
չէ թէ ուրիշ տեղ ալ Պոլիս:
Մոտակայ համաժողովը, որուն մէջ
200,000,000 մահմետականներ, շատ
անգլիական հպատակ երկիրներու պատ-
գամաւորներով պիտի ներկայացուին,
քաջայայտ նպատակ ունի. կրօնա-
կան ազդեցութեան միջոցաւ, հա-
մալսականութիւն մը գոյացնել ամեն
երկրիներու եւ ցեղերու մահմետա-
կաններուն մէջ, ըլլան անոնք իր-
ենց հաւատակից իշխանութեանց հը-
պատակ, եւ կամ օտար հաւատարի
պատկանող իշխանութեանց տակ:
Պատրաստուած օրակարգին մէջ մաս-
նաւորապէս շեշտուած է լաւ յա-
րաբերութիւն պահելու պէտքը այն
կառավարութեանց հետ որոնք քա-
րեկաւ են իսլամի շահերուն եւ ո-
րոնք կը պաշտպանեն անոր հետե-
ւողներու կրօնքը, եւ միւս կող-
մէ միւսլիման իշխողներ կ'ազգա-
րարուն թէ անոնցմէ որոնք որ
իրենց վարմունքով եւ քաղաքակա-
նութեամբ իսլամի տկարութեան
պատճառ կ'ըլլան եւ կը վնասեն
անոր, անոնք Սուրբ Երօնին առջեւ
պատասխանատու պիտի նկատուին
որուն պատասխանութենէն ազատու-
մ չիկայ: Սուլթանը ինքը, ինչպէս
նաեւ շատեր, կը տեսնայ այս օրա-
կարգին մէջ իր վրայ յարձակու-
մը, եւ կը մերժէ անոր յոխապատ
րաստութիւնները զինք համաժողովի
կողմէ հաշիւ: Եւ կ'անշուշտ եւ
իրմէ առնելու խաբիֆայութեան բարձր
տիպարը զոր յափշտակած է:
Այս վախերը արդարացի են, ո-
րովհետեւ հիմայ կը գիտցուի որ,
այն մարդիկը որ պիտի կազմեն
համաժողովի մեծամասնութիւնը պի-
տի գան, Հնդկաստանէն, Աֆրիկէի
Բրիտանական մասերէն, եւ ուրիշ
գէշը Սուլթանին համար, Արաբիա
յէն ուր չնորհիւ Լօրտ Բրքընի եւ
Կալիֆաթի արտաքին գործոց եւ
քաղաքական պաշտօնատան իր ստ-
րագրաններուն տարօրինակ գործու-
նէութեան, Անգլիական ազդեցութիւնը
Սուլթանին ազդեցութեան տեղն առ-
նած է բոլորովին, մինչեւ իսկ իս-
լամի Սուրբ վարդերուն մէջ: Ի-
րապէս Մէքքէի մեծ Շէրիֆն է,
իբր մարգարէին թոռան Հասանի
ուղղակի սերունդը, Լօրտ Բրքընի
եւ Լօրտ Լանստուանի խաբիֆայու-
թեան բնորոշիւն: Երբ քիչ ատեն
առաջ Լօրտ Բրքընը Երօնի օրէնքին
վարչութեան համար Չէյլա (Աֆրի-
կէի մէջ) օրուն, չըջակայ երկիրնե-
րով միասին, բնակիչները ամ-
բողջ մահմետական են, իր հնդ-
կական գործակալներու մէկուն մի-
ջոցաւ նամակ մը ուղղեց Մէքքէի
մեծ Շէրիֆին, խնդրելով անկէ որ,
իրեն ամբողջ մահմետական աշխար-
հի գլուխը, վաւերացնէ եղած կար-
գադրութիւնը:
Այլ եւս գաղափար մը չէ թէ Լօրտ
Բրքընը նպատակ ունի Մէքքէն,
Մեթինէն եւ իրապէս Արաբիոյ այն
ամբողջ մասը որ կը գտնուի իս-
լամի Սուրբ քաղաքները, հոչակել
իրեն: Եւ Շէրիֆի պետութիւնը եւ
ապահովել անոր սուրբ քաղաքներու
հասոյթը, Թուրքիոյ Սուլթանին ա-
նոր անկախութիւնը, եւ ու եւ օտար
տէրութեանց միջամտութենէն ազա-
տութիւնը: Արաբական թիրակողքոյն
ամբողջը, որուն մէջ կը գտնուին
իսլամի սրբաբնակները, անուանապէս
առաջնական նահանգ մը կը կազմէ,
առաջին կառավարչի մը իշխանու-
թեան տակ, որ իրեն կ'ընդուն ու-
նենալով Սահաան, պահապան զօր-

քեր կը պահէ, Մէքքէի, Մեթինէի
եւ Կարմիր ծովու նաւահանգիւ-
ծիտակ մէջ, նպատակ ունենալով
զրամ կորզել, որ հակառակ պարս-
կային պիտի թափէր մեծ Շէրիֆի
գրամարկղիկուն մէջ: Եւ քա-
ղաքային օրինաւորներու գրգռելն,
որոնք մահմետական աշխարհի
ամեն կողմերէն անհամար թիւերով
կը խուժեն Սուրբ քաղաքներուն
մէջ եւ որոնց ամբողջին հարկերն 70ը
կուգայ Բրիտանական Հնդկաստանէն:
Սուլթանին եւ առաջին կառավարչին
իշխանութիւնը մահմետականութեամբ է
այն տեղերուն մէջ որ իրապէս զը-
րամուած են օսմանեան զօրքերէ, եւ
Երօնի միացած մասը մշական
ապստամբութեան մէջ է Բ. Դրան
գէմ քիչ թէ շատ զօրաւոր առաջ-
նորդներու կողմէն բոնց ամբողջն
ալ բարեկամական շարաբերութեան
մէջ են Մեծ Բրիտանիոյ հետ եւ
որոնք կ'օտանան ոչ թէ միայն զը-
րամ այլ նաեւ գէնք ու պաշար
Հնդկաստանի իրենց կրօնակիցներէն:
Լօրտ Բրքընի փոխարքայ ըլլալէն
ի վեր Անգլիա արագաբար իր ազ-
դեցութիւնը տարածած է թիրակող-
քոյն զանազան Արաբ տեղերուն
մէջ, անոնցմէ մէկ քանին թէ Ս-
տէնի հարաւարեւմտեան անկիւնին
մօտ եւ թէ Պարսկական ծոցի ե-
զերքը իր պաշտպանութեան տակ
առած է եւ հաստատ կերպով կը
չանի անոնց վստահութիւնը եւ քա-
րի կամեցողութիւնը, նոյն այն առ-
աւան ինչպէս Բրիտանական կառա-
վարութիւնը կը վայելէ Հնդկաստանի
մահմետականներէն: Միեւնոյն ա-
տեն Սուլթանը Սուրբ քաղաքներու
եւ Արաբիոյ կրօնատէն վախճալով,
որուն անուանական տէրը ըլլալուն
վրայ կ'ընայ բոլոր թէ կ'անցնած
է իր գահը, ամեն ճիշդ կը մտիկ
լինիլու այն վարմանալի երկա-
թիւնը, որ կը չիւնի Դամաս-
կոսէն Մէքքէ, եւ որուն մէկ
երթորդը արդէն լինցած է: Ան-
գամ մը երբ լինայ նա կարող պի-
տի ըլլայ զօրք թափել Սուրբ վա-
րերուն մէջ: Բայց հաւանական է
որ զայն լինցելու համար պէտք ե-
ղած երկու տարին անցնելէ առաջ,
այն քաղաքականութիւնը զոր Լօրտ
Բրքընը ետանդով յառաջ կը մղէ,
պիտի պատկուի յաջողութեամբ, եւ
այն ատեն խորհրդաւոր երկիրը որ
կը կոչուի «Երօնի Արաբիա» կա-
տարեւապէս ազատ պիտի ըլլայ թուրք
գերութենէն, որով անիկայ ման-
գոտանէր, եւ իսլամի խաբիֆայու-
թիւնը Ապախի Համիտի անարժան
եւ արեւմտա-թաթաւ ձեռքերէն առնու-
նելուն պիտի արօր Մէքքէի մեծ
Շէրիֆին, որ միակ օրինաւոր մա-
նագորգն է իսլամութիւնը ճիշտ
ղին:

ԱԶԴ

Ռուսական Զօքան քաղաքի Հա-
յոց եկեղեցւոյն համար պէտք է
ուստիւ, բարեկիրթ եւ իւր նուի-
րական կոչումն լաւ ճանաչող քահա-
նայ մը:
Նոյնպէս միեւնոյն բարեմասնու-
թեամբ օժտեալ երամիշտ մը քաղցը-
րանուազ ձայնի:
Փափաքողները գիմեն գրաւոր եւ
որոշ տեղեկութեամբ ու միան-
գամայն ազգային պաշտօնական վը
կայութեամբ առ
Հոգաբարձութիւն Հայոց
(Ռուսական) ՅՕԲՇԱՆ

ՊՍՍՍՍՍՍ ԶՐԱՅՈՒՍՐԸ

ՍՈՒԼՔԱՆԻ ՍՈՐՈՒՓԸ

Ռուսական Սուլթանի տարածքին
առաջնակարգ գրահաւորներէն «Քիւրազ
Բօթէմքին» նաւադիրներուն ապստամ-
բութիւնը եւ այդ շարժական հսկայ
բերդին սանձարձակ ձգուած ըլլա-
լու յուրը ամբողջ շարաթ մը մաս-
նաւորութեան մասնեց Սուլթանի եւ
զերքներուն տիրող իշխանութիւննե-
րը: Դանտանդ Սուլթանը ահ ու
սարսափ մէջ մնաց, մասնեցով թէ մի
գուցէ ապստամբ նաւադիրը յան-
գըղին այն շարժուն բերդը Պոլսոյ
նեղուցէն ներս քշել եւ, իրենց ար-
գէն վտանգուած կեանքը մեծագոր-
ծութեամբ մը ծախած ըլլալու հա-
մար, երկրորդ առջեւ հասնելու
զայն հիմնադրական ընդ, անոր առե-
րակներուն մէջ թաղելով քրիստո-
նէութեան, քաղաքակրթութեան եւ
մարդկութեան ամենամեծ թշնամին,
կամիւր գաղանդ իր արքանահաներու-
վը: Համար այս երկրորդէն մղուած
փութկոտ հրամաններ արձակեց Պոլ-
սոյ նեղուցը աւելի ամրացնելու
համար: Բայց առաջ, «Բօթէմքին»
նաւադիրը կատարեւապէս ազատա-
սիրութեան անձնաւորներ չը կրցին
ներկայանալ, եւ 6-7 օր ուստական
եւ ուսմանական եղբիւրները դեղե-
րելէ յետոյ, երկրորդ անգամ Գոնս-
թանցա գացին եւ իրենց անձնա-
կան ազատութիւնը ապահովելու
պայմանաւ յանձնուեցան ուսմէն
կառավարութեան, որ զիրենք մաս-
նաւոր կառավարման մը մը փոխադ-
րեց Դանտանի ուսմանական եղբը-
ները, եւ զրահաւորը կը յանձնէ ուս
կառավարութեան:
«Քիւրազ Բօթէմքին» ութ օր ան-
կախ անցուցած կ'անքի մասին
ստացուած հեռագրաւորները բաւա-
կան հեռագրաւորներ եւ մասամբ
հակասական էին: Լուսեցաւ եւ հաս-
տատուեցաւ թէ սպանները, քացի
մէկ քանիէն զօրս Օսման հանեց,
սպաննուած են: զրահաւորին մէջ 750
եւ թորիլէօրին մէջ 15 նաւադիր
կային ու պարտաւոր զրամ ունէին
750,000 բուլղի, կամ երկու միլիոն
ֆր. (°) ծածկան հանդիպած յունական,
եւ եւրոպական վաճառականական նաւէ մը
բաւական ոչխար, ամուխ եւ ուստիստ
առած է զրամը վաճարելով կամ ըստ
ոմանց ուստ կառավարութեան վրայ
փոխանակադիր տալով, ուսմանական
եղբիւրն վրայ բաւական պաշար ա-
ռած է սպաննալիքի տակ: Լուսե-
ցաւ նաեւ թէ ուստական Դեթթօթա
քաղաքը ոմրակցուելով տեւրած եւ
ինքն ալ ականի մը գործունէլով բն-
կըզմած է: Բայց այս լուրը սխալ
եղաւ, ստոյգը սա է որ «Բօթէմքին»
Դեթթօթայի առջեւ երթալով, ըս-
պաննալիքի տակ ուզած է պաշար
ստանել, սակայն տեղեւոյն ուստ կա-
ռավարութիւնը կանխաւ քաղաքա-
ցիները քաղաքէն հեռացուցած ըլ-
լալով, «Բօթէմքին» զրկուած մակոյ-
կին վրայ կ'աւել ըրած է եւ քանի
մը նաւադիր սպաննած ու վերա-
ւորած: Այս ընդդիմութեան վրայ
«Բօթէմքին» միայն մէկ ուստ ար-
ձակելէ յետոյ, քաղաքը աւելի
չուղեւոր մեկնած է ուղղակի Գոնս-
թանցա ուր տեղի ունեցած է անձ-
նատուութիւնը յուլի 8 ին (ն. տ.):
«Բօթէմքին» նաւադիրը մեծ գեր
կրնային կատարել Ռուսիոյ վարչա-
կան ներկայ յոռի դրութիւնը բա-
րեկիրթ տալու գործին մէջ, եթէ

քիչ մը գաղափարական հաստատա-
մտութիւն ունենային : Սեփաստաբօլի
աօրմիդը չը պիտի կրնար իրենց
դէմ կռուիլ նաւագներու նոր ա-
պրտամիտութիւնէ մը : Վախճալով եւ
հետզհետէ նոր նաւեր պիտի գային
իրենց միանալու : արդէն Պալմիրիկին
արձագանքը սկսած էր : Նոյնիսկ
Մանիլա ապստամբ երեք ուսն նա-
ւերու զինուորներուն եւս ապստամ-
բութեան մէջ լինելը եւ իրենց բո-
լոր սպանները սպաննելու մտադիր ըլ-
լային հեռագիրը իմացուց : Բայց
կերեւայ թէ «Բօթէմքին» նա-
ւուն ապստամբներն յետոյ կրկին
անձնատուր ըլլալուն լուրը եւ ու-
րիշ զբաղումի մը նաւագներուն
խոսամիտական գտնուիլը ու յապա-
գելը վնասեցուց «Բօթէմքին»ի նա-
ւագները, որոնք 7-8 օր ծովուն վը-
րայ տարուբերուելէ վերջ միայն իրենց
կային աղատելու գնով եկան անձ-
նատուր ըլլալ ուսմէն կառավարու-
թեան :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԳԻԱ

Սուլթան խաթալըզընը պիտի
ազ խաթիֆէնմիշ տույարագ, ի-
թալիա, վէ Բուսիա էլիէրինի
հուզըրընա գապուլ իթաի :

— «Յարիցա» նամ Բուս վարօ-
րը միշտ երեւիլու օլարագ Մը-
սըրա կիթմէք իւզըրէ իքէն, թալ-
ֆէլէրի ըսեան իտուպ, գաբի-
թանը էօլտիւրմէք թէհտիտին-
տէ պուլընտըլարը սէպէպլէ՝
Սթանպուլտան կէրի տէօնէրէք
Օտեսայա ալտէթ իթմիշ տիր :

— Էրմէնիստան վիլայէթիւ-
րինտէ՝ վէրկի թահսիտարլարը
Համիտիէ սիւվարէլէրի իլէ պէ-
րապէր էրմէնի քէօյլէրէ կիտէ-
րէք ֆագիւր քէօյլէրէրի էլմէք
տէ վէ էշեա վէ չիթիթիւրիւթաթ-
լարընը զապթ ա իսթիլա իթ-
մէքտէ, վէ տիկէր թարաֆտան
Քիւրտլէր աղըր ֆայիլէրլէ էր-
մէնիլէրէ էտիւնն բարա վէրուպ
միւլէրլէրինի հաճ ու զապթ
էլէմէքտէ, վէ էքսէրի գատըն-
լարը վէ գըլլարը Քիւրտլէր
րէհին ալմագտա վէ ալմագ-
լարը էօտէնէնէ գատար պօրնու
էրմէնիլէրին խանէլէրինտէ օ
թուրարագ պէսլէնմէքտէ վէ
ըրզ ու նամուլարընը բայէմալ
իթմէքտէ օլտըլարը Սթան-
պուլտան էճնէպի ճէրլտէլէրէ
պիլտիլիլիյօր :

— Սասուն, Մուշ վէ վան գա-
ղալըրընտա թահսիտարլարըն
վէ համիտիլէրին թէգեիգա-
թը թէքրար արթմըլ օլուպ, օլ
ճիւլարտաքի էրմէնիլէրի էէնի
գըրկընլարտան զօրգմագտա
տըրլար : զերա Աճէմ սինօրը իւ-
զէրինտէ Քիւրտ չէթալարը կէ-
րիւնմէքտէ իմիշ :

— Էրմէնի վիլայէթիլէրինտէ
պէտէլի ասքէրիլէ 38 զուրուշ-
տան 50 զուրուշա երեքէլմիշ
տիր, վէ էօլէն, գաթլ օլընան վէ

նաֆագայա միւհթաճ գալանլա-
րըն տալի պէտէլի ասքէրի-
լէսինի տիկէրլէրինտէն ճէպրէն
թահսիլ իթմէքտէ տիրլէր : Քէ-
զա էսկի վէրկիլէր իսթէնմէք-
տէ օլուպ, իլմուլապէրլէրի զալպ
իտէնլէրի էէնիլտէն 10 սէնէլիք
վէրկիլէրի էօտէմէկէ իճպար ի-
տէյօրլար :

— Միւսալլահ պիտի Արնաւուտ
չէթալըր Գուրչուլըտան Սըրպ
սինօրընա կիրմիշ վէ սինօրըն
սըրպ ասքէրլէրի իլէ գանլը
պիտի գալկա վուգու պուլմիշ չ
իքի թարաֆտան պիտի գալ էօ-
լիւ վէ եարէլի տիւշմիշ տիր
Սըրպ չէթալարը Մաքէթմիւսա-
յա կիրմէքտէ օլտըլարընա մու-
գապիլ Արնաւուտլար տալի
Սէրպիայա կիրէրլէր իմիշ շու-
հալտէ եարընտա Պուլկարիայա
կիրմէկէ պաշլապալար եա՝ . . .

— Բուս Բաթրիգհանէսինին սի-
նօթը սօն մէճլիսինտէ Գուցօ-
Ուլահլարա Պապը իլիտէն վէ-
րիլէն իմթիպաթ ու սէլահի-
լէթլէր իւզէրինէ միւլէքէրէ ի-
տէրէք, անլէրի բաթրիգհանէ-
նին հագլարընա գարշը կէօր-
միւշ վէ պու խուսուտա Պապը
Ալիլէ բօթէթաթ իթմէք իչիւն
գարար վէրմիշ տիր : [պօշ զահ-
մէթ]

ԲՈՒՍԻԱ

Թիֆլիս 26 յունիս—Պիտ Բուլիս
զապիթի պիտի մէճհուլ շախսըն
աթալըր իքի րէվօլէր գուր-
չուլընտան վուրուլուպ էօլտիւ :
Չապիթին հանընտա պուլընան
պիտի խաղալ գըրըճը իլէ գա-
թիլին գաֆաթընը քէստի :

— Մէքթէպլի պիտի կէնճ ֆայ-
թօնլէ կիտէր իքէն պիտի պօմ-
պա աթարագ 15 քիշի եարէլէ-
տի :

— Իթալիանըն Լուկանօ չէհ-
րինտէ յունիս 24 տէ Բօլօնիալը
գօմթալար մէճլիս իտուպ, պիւ-
թիւն Բօլօնէպլէրին սիլահլա-
նարագ ումուս ըսեաա հաղը-
լանմալարընա տայի պիտի տա
վէթնամէ նէշր ու իլան իթմէլէրի
իչիւն գարար վէրմիշէր : Քէզա
«Բօլօնիա» իսթինտէ պիտի կազէ-
թա թէհտիս իտիլէսի գարարա
ալընմըլ :

— Բուսիտան էհալի գալմագ-
տա վէ հէր կիւն 15000 քիշի
սինօրտան չըմէնտըքլէրէ Հուն-
գարիայա վէ Բուսիտայա չըգ-
մագտա օլտըլը Լէմպէրկտէն
Վիէննա կազէթալարընա պիլտի-
րիլիյօր :

— Օտեստա իսթիլալ թէս-
քին օլընմըլ իստէ հիւքիւմէթ
պիտի չօք իլմուտարլարը տէր-
տէսթ իթմէքտէ վէ էվ-
լէրի եօզլմագտա տըր :
Օտեստա տարիւլ—Ֆինուս (հա-
մալսարան) տիրէքթօրընը տա-
լի հապս իթմիշէր : Սօն վա-

գալարտա թէլէֆիաթըն մըգ-
տարը հիւքիւմէթ 123 քիշիի-
լան իտէյօր, հալպուքի «Նօվօս-
թի»ին մուխպիլի բօլիսիանըն
թաստիգի իլէ 2,000 քիշի կէօս-
թէրմիշ տիր :

— Հիւքիւմէթ Լօցտաքի իս-
թիլալը սօսիալիսթիլէրին պա
խուստա Լէհ—Եահուտիլէրին թէշ
վիգի իլէ վուգու պուլտու տէ-
յօր վէ 160 էօլիւ վէ 152 եարէ
լի կէօսթէրիյօր Օրատան 20,000
Եահուտի հիճրէթ իթմիշ :

— Վարչաւիանըն զապթիէ միւ-
ֆէթիլի աղըրճա եարէլէնտի :

— Բուսիանըն հէր թարա-
ֆընտա էհալի նամը իլէ պիտի
հէյէթի մուրախասէ Չարըն հու-
զուրընա գապուլ օլընտը : Մէշ-
քիւր հէյէթ էհալիսին էքսէրի-
սինին Չար իչիւն հէր պիտի
ֆէտա քնարլըղա հաղըր պուլըն-
տըղընը արզլէ, մուհարէպէնին
տէվալ օլընմասընա վէ էսկի
ուսա աթէթլէրինի թէմէլ թութ-
մագ շարթը իլէ՝ մէճլիսի միլի-
նին թօլլանմասընա արզու պէ-
յան իթաի :

Չար էհալիսին շու հըստիյա-
թընտան տալար մէմուսիլէթի-
նի պէյան իթաիքտէն սօնրա,
տէտի «պիլտէ Բուսլարըն էսկի
աթէթլէրինէ գարշը կիւնահ իշ-
լէտիք ֆագաթ մէմալիքտէ սուհ
ու սապիլի թանղիմ վէ իպգա
իթմէք իչիւն սիլիլի տալի պա-
նա եարալմ իտէճէկիլիլէ էմի-
նիմ :

— «Ք. Բօթէմքին» նամ տար
Բուս զըրշլարընի թալֆէրի-
650 քիշի Գէօտէնմէքտէ Բուսի
հիւքիւմէթինէ թէսլիմ օլընմըլ
իստէ, պէրապէր պուլընան թօր-
ըիլէթ թէսլիմ օլընմագ իսթէ-
մէյէնուպ, տէմիշ տիր քի պիլ
Բուս հիւքիւմէթինէ ասը տէյիլ-
իլ «Բօթէմքին» պիլի ճէպրէն
պէրապէր ալար, չիմաի պիլկէ-
րի կիտէճէկիլ : Թօրըիլէթ կէ-
րի կիթմիշ : «Բօթէմքին» թա-
լիֆէրլէրի պուլընան բարալարը
պէօ իւշմիւշէր :

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Է

Մանչուրիտան ալընան հալա-
տիլէր չէտիտ միւստարէպէլէրին
տէվալմընը վէ Բուսլարըն կէրի
չէքիլուպ ճարօնլըլարըն իլէրի
կիթաիքլէրինի պիլտիլիյօրլար :

— Ճարօն տօնանմասընը 1-2
հիւճոմտան սօնրա Սախալին ա-
տուրընը զապթ իթաիքլէրի սօն
թէլէկրաֆ պիլտիլիյօր տիր :

— Ճարօն մուրախասլարը Վա-
չինկիթօնա կիթմէք իչիւն եօլա
չըղալար :

— Ճարօնիանըն էէնի իսթիլ-
արալը 30 միլիոն ինկիլիլ լիւրալը
100 4 ֆաիլլէ Ինկիլիլ վէ Աճէ-
րիակալը պանգէրլէրտէն իմպա-
լանտը :

— Բուսիա տալի 100 միլիոն
մարգ Ալմանիտան իսթիլարալ
իթմէկէ չալըշիյօր :

ԹԻՒՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ. Թուրք 29
ՉԱԽԻՒԷ

ՊԱՆԴՏԱԾ	
Վալիճ 54-60 իւլ. 8.60 / 11. 40/2	
Արապա 52-62 իւլ. 9. /11 60	
ԱՐԲԱ	
Վալիճ 100 քիլո հին 11. /11. 20	
Արապա 42-45 իւլ. 6.60 /6. 80	
ՍՐԲԱ ԵՆԻ հէքթ. 6. 80	
ԵՌԻՒԱՆ արապա 33/36 լւ. 5. 20/5.70	
Վալիճ 100 քիլո 9.40/10. 20	
ՅԱՍՈՒԼԵԱ 100 քիլո հօգ	
ՌԱԲԵԱ 100 » 19—20	
Արապա 100 քիլո 16—18	
ՏԱՐ արապա հէքթ. հօգ	
ՔՕԼՕՁ արապա 55-60 լւ. 11./12.80	
ՄԻՍԻՐ 57-58 լւ. 6. 40/7.60	
» 100 քիլո 11.20—11. 90	
ՉԱԿՏՏԻ արապա 7. 70/ 8.	
» 100 քիլո 10. 80 /11. 20	
Կիւնա 15—20 վալիճ վէ 30—40	
արապա կէլմէքտէ. վալիճ մուսմէ- լէտի նարօլէն 20 ֆր. արապա մու- սմէլէտի նարօլէն 20. 20	

ՍԱՐԲԱՆԻՅԷ

Նարօլէն 20, 20 ֆրանք
Օմ. լիւրալը 22, 75 ալիսին ֆրանք

ՊԱԳԱՒԵՅԷ

Վարնա րիւցարընտա պագալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, աթմու ֆրանք իլէ :	
ԳԱՀԱԷ 1,95/2 10	
ՇԷԲԷՐ հէմք 75	
ՇԷԲԷՐ քէմմէլ սանտը 37/75	
ԲԻՐԻՆՃ Ֆիլիպէ չուվալը հօգ	
» ճարօն 35	
» Ինկիլիլ » 28. 50	
Բիլգօն » 49.	
ԿԱՁ Սանալը 11. 60	
ՉԷՅԻՆԵ Խաղը քիլո 85.—1	
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ 25	

ԹԱՏՐՈՆ ԳՕՐԻՍ

— օ —

Այս գիշեր «Վէստը» հայ գերս. խմ.
րին կողմէ առաջին անգամ ըլլալով
պիտի ներլայագուր «ԻՐԱՆԻՆԻՔԸ
ՈՐՈՒՆԷՆ Է» արամ գօմէտին, 3 արար :

Վաղը գիշեր «ՄԻՓԷ ՄԵՂԱԽՈՐ
ԵՄ» ծիծաղալար թարմ գօմէտին
3 արար : Նաեւ հայկական գիւղական
կեանքէ երգեր եւ պարեր Օր. Ռօգա-
լի եւ ամբողջ խմբին կողմէ :

Գիշերը— Ա. կարգ 1. 20 Բ. կարգ 1.
Գ. կարգ 50 սանդիլմ : Տասը խաղի
տոմսով միատեղ զնոյնի հարիւրին
20 գեղը :

ԱՊՐԷՄԻԱՆ ի տոմսերը կը ծախուին
Տ. Չարպահանէլեանի գրատունը :

ՊԱՇՏՈՆ ԿՈՒՉԷ

Հայերէն եւ Պուլկարեան թղթակ-
ցութեան կարող նոյնպէս ֆրանսերէ-
նի եւ տոմարակալութեան տեղեակ
երթատարը մը պաշտօն կը փնտէս օր
եւ է վաճառատան մը մէջ : Երաշխա-
ւորութեամբ :

Մանրամանութեան եւ պայմանագ
համար գիմն իրաւունքի խմբագրու-
թեան :

Одговорили А. Курбетиянъ
печатица П. Глушковъ и С.-не—Варя